# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N ՀՀ ԷՆՄԳ ՇՀԱՊՁԲ 15/8 -94-16**

ք. Երևան <<01>> << 09 >> 2016 թ.

**ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը**, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Շահնազարյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և **<<Նորմա-պլյուս>>** ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն **Դ. Մարկոսյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի մատակարարումը** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է`**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո` ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից;

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի`**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո` ողջամիտ ժամկետում, այլ անձի` Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք` համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է`**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը` Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան` Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան` Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք` Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 2474250 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2016թ. :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու հաջորդող օրվանից հաշված տեխնիկական բնութագրում նշված ժամկետը, իսկ եթե ապրանքատեսակի համար տեխնիկական բնութագրում նշված չէ ժամկետ, ապա երաշխիքային ժամկետ է սահմանվում ապրանքատեսակը ընդունելու հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթ (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը ,Գնումների մասին՚՚ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծ: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը ,Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին՚՚ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

_________________ Ա. Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Նորմա Պլյուս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
<<Արդշինբանկ>>ՓԲԸ
Հ/Հ՝ 2474400007570000
ՀՎՀՀ՝ 00053663

_________________ Գ. Մարկոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1

<<01 >> <<09>> 2016թ. կնքված

N ՀՀ ԷՆՄՍԳ ՇՀԱՊՁԲ 15/8 -96-16 ծածկագրով գնման պայմանագրի

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չափա-բաժին N | Ապրանքի անվանումը | Ապրանքի հատկանիշերը |
|---|---|---|
| | | |
| 17. | Մուկ | **Մուկ Genius DX-120 կամ համարժեքը**<br>Ջենյուս ԴԻԻՔՍ-120 |

| **Характеристики**<br>Բնութագիր | |
|---|---|
| Требования к системе<br>Պահանջները համակարգին | Компьютер на базе Windows<br>Համակարգիչ Ուինդոուսի հիմքի վրա |
| Совместимость<br>Համատեղելիություն | Windows 10<br>Ուինդոուս 10 |
| Двигатель датчика<br>Շարժիչի ցուցիչ | Оптический<br>Օպտիկական |
| Интерфейс<br>Ինտերֆեյս | USB<br>ՅՈՒԷՍԲԻ |
| Длина кабеля<br>Մալուխի երկարությունը | 1,5 м<br>1,5 մ |
| Количество кнопок<br>Կոճակներ քանակ | 3 (влево, вправо, средняя кнопка с прокруткой)<br>3 (ձախ, աջ, միջին կոճակը պտտվող) |
| Цвета<br>Գույն | Черный<br>Սև |
| Вес<br>Քաշ | 85g<br>85գ |
| Единица измерения (ШxВxГ)<br>Չափման միավոր (ԼxԲxԽ) | 105 x 37 x 60 мм<br>105 x 37 x 60 մմ |
| Гарантия | Один год |

| | | | |
|---|---|---|---|
| | | Երաշխիք | Մեկ տարի |
| 25. | **Քարթրիջների հավաքածու** | **Քարթրիջ CF360X (black), CF361A (cean), CF362A (yelow), CF363A (magenta) կամ համարժեքը**<br><br>ՍԻԷՖ360Իքս (սև), ՍԻԷՖ361Էյ (կապույտ), ՍԻԷՖ362Էյ (դեղին), ՍԻԷՖ363Էյ (կարմիր) | |

| | |
|---|---|
| **Քարթրիջ CF360X**<br>ՍԻԷՖ360Իքս<br>**Основные характеристики**<br>Հիմնական բնութագրերը | |
| **Производитель**<br>Արտադրող | **hp**<br>Էյչփի |
| **Модель**<br><br>Մոդել | **CF360X (№508X) (экономичный)**<br><br>ՍԻԷՖ360Իքս (№305Իքս)(տնտեսող) |
| **Тип оборудования**<br>Սարքի տեսակը | **Черный Картридж**<br>Սև քարթրիջ |
| **Описание**<br><br>Նկարագրություն | **Оригинальный картридж hp**<br>Բնօրնակ քարթրիջ էյչփի |
| **Ресурс черного картриджа или контейнера с черными чернилами**<br><br>Սև քարթրիջի պաշար կամ բեռնարկղ սև թանաքներով | **12500 страниц**<br><br>12500 էջ |
| **Քարթրիջ CF361A**<br><br>ՍԻԷՖ361Էյ | |
| **Модель**<br><br>Մոդել | **CF361A (№508A) (голубой)**<br>ՍԻԷՖ361Էյ (№508Էյ) (կապույտ) |
| **Тип оборудования**<br><br>Սարքավորման տեսակը | **Голубой Картридж**<br><br>Երկրագույն քարթրիջ |
| **Описание**<br><br>**Նկարագրություն** | **Оригинальный картридж hp**<br><br>Բնօրինակ քարթրիջ էյչփի |
| **Ресурс черного картриджа или контейнера с** | **5000 страниц** |

| | |
|---|---|
| **черными чернилами**<br><br>Սև քարթրիջի պաշար կամ բեռնարկղ սև թանաքներով | 5000էջ |
| **Քարթրիջ CF362A**<br><br>ՍԻԷՖ362Էյ | |
| **Модель**<br><br>Մոդել | **CF362A (№508A) (желтый)**<br>ՍԻԷՖ362Էյ (№508Էյ) (դեղին) |
| **Тип оборудования**<br>Սարքավորման տեսակ | **Желтый Картридж**<br>Դեղին քարթրիջ |
| **Описание**<br><br>Նկարագրություն | **Оригинальный картридж hp**<br><br>Բնօրինակ քարթրիջ |
| **Ресурс черного картриджа или контейнера с черными чернилами**<br><br>Սև քարթրիջի պաշար կամ բեռնարկղ սև թանաքներով | **5000 страниц**<br><br>5000 էջ |
| **Քարթրիջ CF363A**<br>ՍԻԷՖ363Էյ | |
| **Модель**<br><br>Մոդել | **CF363A (№508A) (пурпурный)**<br><br>ՍԻԷՖ363Էյ (№508Էյ) (կամիր) |
| **Тип оборудования**<br>Սարքավորման տեսակը | **Пурпурный Картридж**<br>Կարմիր |
| **Описание**<br><br>Նկարագրություն | **Оригинальный картридж hp**<br>Բնօրինակ քարթրիջ էյչփի |
| **Ресурс черного картриджа или контейнера с черными чернилами**<br><br>Սև քարթրիջի պաշար կամ | **5000 страниц**<br><br>5000 էջ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | բեռնարկղ սև թանաքներով | | |
| 26. | Տպիչ | **HP LaserJet Pro M521dn Multifunction Printer (A8P79A) Cartrig HP 55X (CE255X) (3 հատ) կամ համարժեքը** | | |

Էյչփի Լազերջեթ Փրո Էմ521դիէն Մուլթիֆանքթիոն տպիչ (Էյ8Փի79Էյ) քարթրիջ Էյչփի 55իքս (Սի255իքս)

| | |
|---|---|
| **Основные характеристики**<br>Հիմնական բնութագրիչներ | |
| **Производитель**<br>Արտադրող | **HP**<br>Էյչփի |
| **Серия**<br>Շարք | **LaserJet Pro MFP**<br>Լազերջեթ Փրո ԷմԷֆՓի |
| **Модель**<br>Մոդել | **M521dn**<br>Էմ521դիէն |
| **Тип оборудования**<br>Սարքավորման տեսակ | **МФУ, Факс**<br>Էմէֆու, ֆաքս |
| **Применение**<br>Օգտագործում | **Интенсивная эксплуатация, Высокоскоростная печать**<br>Ինտեսիվ շահագործում, մեծ արագությամբ տպող |
| **Технология печати**<br>Տպման տեխնոլոգիան | **Лазерная монохромная**<br>Լազերային մոնոքրոն |
| **Цвета, использованные в оформлении**<br>Գույները որոնք օգտագործվում են ձևավորման մեջ | **Серый, черный**<br>Մոխրագույն, սև |
| **Комплект**<br>Հավաքածու | |
| **Комплект поставки** | **Многофункциональный принтер HP LaserJet Pro M521dn включает встроенную автоматическую двустороннюю печать**<br>**встроенный Gigabit Ethernet 10/100/1000T**<br>**черный картридж с тонером HP LaserJet (~6000 стр.)**<br>**документацию к принтеру и программное обеспечение на компакт-диске**<br>**руководство по установке, лист с информацией о технической поддержке, гарантийное руководство**<br>**шнур питания** |

| | | | |
|---|---|---|---|
| | | Մատակարարման հավաքածուն | **кабель для факса**<br>**HP LaserJet Pro M521dn**<br>**էյջՓի Լազերջեթ փրո էմ521դիէն**<br>բազմաֆունկցիոնալ տպիչ<br>ներառում է երկողմանի ավոմատ տպում<br>Ներդրված Գիգաբիթ Էդերնեթ 10/100/1000Թի<br>Սև քարթրիջ էյջփի լազերջեթ (~600) էջ սև տոներով<br>Փաստաթղթեր տպիչի ծրագրային ապահովման լազերային սկավառակով<br>Ներդրման համար առաջնորդվելու ժողովածու, տեղեկատվությամբ թերթ, երաշխիքի ժողովածու, սնուցման մալուխ, ֆաքսի համար մալուխ<br>էյջ Փի Լազերջեթ Փրո էմ521դիէն |
| | | **Конфигурация**<br>Կոնֆիգուրացիա | |
| | | **Процессор**<br>Պրոցեսոր | **800 МГц**<br>800 Մhg |
| | | **Память принтера/МФУ**<br>Տպիչի հիշողությունը/ ԷՄԷՖՈՒ | **256 Мб; не расширяется**<br>**Память факса до 250 страниц**<br>256 ՄԲ : չի ավելանում<br>Ֆաքսի հիշողությունը մինչև 250 էջ |
| | | **Экран**<br>էկրան | |
| | | **ЖК-дисплей**<br>ՀԲ էկրան | **3.5" (8.89 см); сенсорный, цветной**<br>3.5" (8.89 սմ); զգայուն, գունավոր |
| | | **Интерейс, разъемы и выходы**<br>Ինտերֆեյս, ելքեր և մուտքեր | |
| | | **Интерфейс**<br>ինտերֆեյս | **USB 2.0, RJ-45**<br>ՅՈՒԷՍԲԻ 2.0, ԱրՋի-45 |
| | | **Сетевой интерфейс**<br>Ցանցային ինտերֆեյս | **1 Гбит/сек**<br>1 Գբ/վ |
| | | **Порты**<br>Պորտերը | **RJ-45, 2 x RJ-11, USB 2.0 Type A, USB 2.0 Type B**<br>ԱրՋեյ-45 x ԱրՋեյ-11, ՅՈՒԷՍԲԻ 2.0 տեսակ ԷՅ, ՅՈՒԷՍԲԻ 2.0 տեսակ Բի |
| | | **ADF (податчик оригиналов)** | **Двусторонний** |

| | | | |
|---|---|---|---|
| | | ԷՅԴՒԷՖ (բնօրինակով մատուցվող) | Երկկողմանի |
| | | **Формат печатных носителей**<br><br>Տպվող կրիչների ձևաչափերը | **А4 (210 х 297 мм), А5 (210 х 148 мм), 13х18см, А6+ (100 х 165 мм), А6 (4"х6", 10х15 см)**<br>Ա4 (210 х 297 մմ), Ա5 (210 х 148 մմ), 13х18սմ, А6+ (100 х 165 մմ), А6 (4"х6", 10х15 սմ) |
| | | **Типы печатных носителей**<br><br>Տպվող կրիչների տեսակները | **Бумага (документная, в цвете, фирменные бланки, обычная, с напечатанной информацией, перфорированная, из вторсырья, грубая); конверты, наклейки, плотная бумага, прозрачные пленки, по заказу пользователя**<br>Թուղթ (փաստաթղթային, գույնով, ֆիրմային ձևաթղթեր, սովորական, տպած տեղեկատվությամբ) |
| | | **Емкость податчика бумаги**<br>Թղթի տրման տարողա-կանությունը | **500 листов**<br><br>500 թերթ |
| | | **Емкость многоцелевого лотка/лотка ручной подачи**<br>Տարողականությունը բազմանպատակ արկղի/ձեռքով տրման արկղ | **100 листов**<br><br>100 թերթ |
| | | **Емкость податчика оригиналов (ADF)**<br>Մատուցող բնօրինակի տարողունակությունը | 50 листов<br><br>50 թերթ |
| | | **Емкость выходного лотка**<br>Ելքային արկղի տարողունակությունը | **250 листов, задний лоток приема на 100 листов**<br>250 էջ, ելքային արկղը 10 թերթ վերցնելով |
| | | **Плотность бумаги**<br><br>Թղթի հաստությունը | **52 - 120 г/м2**<br><br>52 - 120 գր/մ2 |
| | | **Плотность бумаги для многоцелевого лотка/ручной подачи**<br><br>Թղթի հաստությունը բազմանպատակ արկղի/ձեռքով դնելու համար | **52 - 199 г/м2**<br><br>52 - 199 գր/մ2 |

| | | | |
|---|---|---|---|
| | | **Максимальная плотность бумаги**<br>Թղթի առավելագույն հաստությունը | **199 г/м2**<br><br>199 գր/մ2 |
| | | **Duplex unit (модуль двусторонней печати)**<br>Կրկնակի մաս (երկկողմանի տպման մոդուլ) | **Есть**<br><br>Առկա |
| | | **Двустороннее копирование**<br><br>Երկկողմանի տպում | **Поддерживается**<br><br>Թույլատրվում է |
| | | **Параметры/функции печати**<br><br>Տվյալները/տպման ֆունկցիաները | |
| | | **Время выхода первой страницы**<br>Առաջին էջի ելքի ժամանակը | **8 секунд**<br><br>8 վ |
| | | **Кол-во цветов**<br>Գույների քանակը | 1 |
| | | **Разрешение ч/б печати**<br><br>Թույլատելիությունը Սև/սպիտակ տպման | **1200 x 1200 dpi в режиме наилучшего качества**<br><br>1200 x 1200 դիփիայ ամենալավ որակի ռեժիմում |
| | | **Максимальная скорость монохромной печати**<br><br>Առավելագույն արագությունը մոնոքրոմ տպման | **40 стр./мин.**<br><br>40 էջ/ր |
| | | **Язык описания страниц**<br><br>էջի նկարագրման լեզուն | **PCL 5c, PCL 6, Эмуляция PostScript Level 3**<br><br>ՓիՍիէլ 5սի, ՓիՍիէլ 6, էմուլյացիա փոսթսքրիփթ 3 մակարդակ |
| | | **Поддержка технологии HP ePrint** | **Есть. Функция HP ePrint позволяет выполнять печать отовсюду. После включения функция HP ePrint назначает устройству адрес электронной почты. Для выполнения печати просто отправьте на этот адрес сообщение эл. почты с вложением документа.** |

| | | | |
|---|---|---|---|
| | | Էջֆիի ի տպող տեխնոլոգիայի թույլատրելիությունը | Առկա, էյջփի իտպող ֆունկցիան թույլ է տալիս տպել ամենուրեղից: Էյջփի իտպող ֆունկցիայի միացումից հետո սարքին տրվում է էլեկտոնային փոստի: Տպման իրականացման համար այդ էլ փոստին ուղարկվում է հաղորդագրություն |
| | | **Рекомендуемая нагрузка**<br><br>Խորհուրդ տրվող ծանրաբեռնվածությունը | **2000 - 6000 страниц в месяц**<br><br>2000 - 6000 էջ ամսում |
| | | **Ресурс принтера**<br>Տպիչի ռեսուրսը | **75 000 страниц в месяц - максимальная нагрузка**<br>75 000 էջ ամսում- առավելագույն ծանրաբեռնվածութ-յունը |
| | | **Параметры/функции копирования**<br>Տվյալները/ պատճենահանման տվյալները | |
| | | **Макс. скорость ч/б копирования**<br><br>Առավելագույն արագությունը ծ/թ պատճենահա-նում | **40 стр./мин.**<br><br>40 էջ/ր |
| | | **Максимальное кол-во копий**<br>Պատճենների առավելագույն քանակը | **99 копий**<br><br>99 պատճեն |
| | | **Параметры/функции сканирования**<br>Պարամետրերը/սքանավորման ֆունկցիաները | |
| | | **Оптическое разрешение МФУ**<br><br>Օպտիկական թույլատելիությունը ՄՖՈՒ | **1200 dpi при сканировании со стекла (цветное, градации серого и черно-белое)**<br>**300 dpi при использовании податчика оригиналов (цветное, градации серого и черно-белое)**<br><br>1200 դիփիայ ապակու վրայից սքանավորման դեպքում (գունավոր) |
| | | **Двустороннее сканирование**<br>Երկկողմանի սքանավորում | **Поддерживается**<br>աջակցում |
| | | **Скорость сканирования**<br><br>Սքանավորման | **До 19 страниц в минуту в черно-белом режиме, до 14 страниц в минуту в цветном режиме** |

| | | | |
|---|---|---|---|
| | | արագություն | Մինչև 19 էջ րոպեում սև և սպիտակ ռեժիմում մինչև 14 էջ րոպեում գունավոր ռեժիմում |
| | | **Макс. размеры области сканирования**<br>Առավելագույն չափը սքանավորման շրջանում | **216 x 297 мм при сканировании со стекла, 216 x 356 мм при использовании ADF (податчика оригиналов)**<br>216x297 մմ էկրանի վրայից սքանավորման դեպքում, 216 x 356 մմ ԷյԴիԷֆ-ի օգտագործման ժամանակ |
| | | **Формат файла сканирования**<br>Սքանավորվող ֆայլի ձևաչափը | **PDF, JPG, RTF, TXT, BMP, PNG, TIFF** |
| | | **Функции сканера**<br>Սքաների ֆունկցիաներ | **Сканирование на USB-накопитель, Сканирование в электронную почту, Сканирование на FTP-сервер, Сканирование для отправки по факсу, Сканирование на файл-сервер**<br>ՅՈՒԷՍԲԻ կրիչի վրա սքանավորում<br>Սքանավորում էլեկտոնային փոստ<br>Սքանավորում ԷՖԹԻՓԻ-սերվեր<br>Սքանավորում ֆաքսով ուղարկելու համար<br>Սքանավորում ֆայլ-սերվերի վրա |
| | | **Факс**<br>Ֆաքս | |
| | | **Ускоренный набор**<br>Արագացված հավաքում | **100 номеров**<br>100 համար |
| | | **Разрешение факса**<br>Ֆաքսի թույլատրե-լիությունը | **300 x 300 dpi**<br>300x 300 դիփիայ |
| | | **Факс**<br>Ֆաքս | **33,6 кбит/сек**<br>33.6 կբթ/վ |
| | | **Расходные материалы / заменяемые компоненты**<br>Օգտագործվող նյութեր/ փոխարինվող մասեր | |
| | | **Тип расходных материалов**<br>Ծախսվող նյութերի տեսակները | **Картридж**<br>Քարթրիջ |
| | | **Картридж черный**<br>Սև քարթրիջ | **CE255A (№55A), CE255X (№55X) (экономичный) и аналоги**<br>Սի255էյ (հ 55Այ), ՍիԻ255իքս (հ55իքս)<br>(տնտեսող) և նույնական |
| | | **Ресурс расходных материалов/заменяемых компонентов** | |

| | |
|---|---|
| Ծախսվող նյութերի ռեսուրսներ/փոխարինվող | |
| **Ресурс черного картриджа или контейнера с черными чернилами**<br>Սև քարթրիջի ռեսուրսը կամ արկղ սև թանաքով | **6000 страниц**<br>6000 էջ |
| **Ресурс черного эконом. к-жа**<br>Սև էկոնոմ քարթրիջի ռեսուրս | **12500 страниц**<br>12500 էջ |
| **Разрешение копирования**<br>Պատճենա-հանման թույլատելիությունը | **300 x 300 dpi**<br>300 x 300 դիփիայ |
| **Объектив**<br>Օբյեկտիվ | |
| **ZOOM**<br>Չափի փոխում | **25 - 400%** |
| **Безопасность**<br>Անվտանգություն | **Слот для Kensington lock**<br>Քինգսթոն կողպեքի համար արկղ |
| **Питание**<br>Սնուցում | **от электросети**<br>Էլեկրացանցից |
| **Потребление энергии**<br>Էներգիայի օգտագործում | **760 Вт при печати, 18.2 Вт в режиме готовности, 4.3 Вт в спящем режиме, 0.3 Вт в режиме "выключен"**<br>760 Վտ տպման ժամանակ, 18.2 Վտ պատրաստության ռեժիմում, 4.3 Վտ քնած ռեժիմում, 0,3 Վտ «անջատման» ռեժիմում |
| **Совместимость**<br>Համատեղելիությունը | |
| **Поддержка ОС** | **Windows 8, Windows 7, Windows Vista, Windows XP, Windows Server 2012 - ОС, поддерживающие полную установку ПО<br>ОС, поддерживающие установку драйверов: Windows Server 2008 (32/64-разрядная), Windows Server 2003 (32-разрядная, SP3 или выше), Mac** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ՕՀ-ի աջակցումը | **OS X v10.6, OS X Lion (v10.7) и OS X Mountain Lion (v10.8), Linpus Linux (9.4, 9.5), RED HAT Enterprise Linux 5.0 (требуется предварительно созданный пакет), SUSE Linux (10.3, 11.0, 11, 11.1, 11.2), Fedora (9, 9.0, 10, 10.0, 11.0, 11, 12, 12.0), Ubuntu (8.04, 8.04.1, 8.04.2, 8.10, 9.04, 9.10, 10.04), Debian (5.0, 5.0.1, 5.0.2, 5.0.3) (поддерживается программой автоматической установки), HPUX 11 и Solaris 8/9**<br><br>Ուինդոուս 8, Ուինդոուս 7, Ուինդոուս Վիսթա, Ուինդոուս Իքսփի, Ունդոուս Սերվեր 2012-ՕՀ,<br><br>Ուինդուս Սերվեր 2008 (32/64-բիթ), Իինդուս Սերվեր 2003 (32-բիթ, ՍՊ3 или выше), Մաց ՈՍ Խ վ10.6, ՈՍ Խ Լիոն (վ10.7) и ՈՍ Խ Մոունտաին Լիոն (վ10.8), Լինպուս Լինուխ (9.4, 9.5), ՌԵԴ ՀԱՏ Ենտերպրիսե Լինուխ 5.0 (Պահանջվում է նախորոք ստեղծված փաթեթ ), ՍՈՒՍԵ Լինուխ (10.3, 11.0, 11, 11.1, 11.2), Ֆեդորա (9, 9.0, 10, 10.0, 11.0, 11, 12, 12.0), Ուբունտու (8.04, 8.04.1, 8.04.2, 8.10, 9.04, 9.10, 10.04), Դեբիան (5.0, 5.0.1, 5.0.2, 5.0.3) ( ավտոմատ տեղադրման ծրագրային աջակցություն), ՀՊՈՒԽս 11 и Սոլարիս 8/9 | |
| | | | | |

| | |
|---|---|
| **Прочие характеристики**<br>Այլ բնութագրեր | |
| **Прочее**<br>Լրացուցիչ | **Быстрая установка без использования компакт-диска благодаря технологии HP Smart Install (только для Windows) Поддержка многозадачности**<br>Արագ տեղադրում առանց լազերային սկավառակի օգտագործման շնորհիվ էյչՓի Սմարթ ինսթոլ տեխնոլոգիայի (միայն Ուինդոուսի համար ) Բազմախնդրության աջակցություն |
| **Размеры**<br>**(ширина x высота x глубина)**<br>Չափերը (լայնությունըx բարձրությունըx խորությունը) | **465 x 465 x 508 мм - со сложенными лотками, 465 x 750 x 900 мм - с выдвинутыми лотками**<br>465 x 465 x 508մմ դժվար արկղներով, 465 x 750 x 900մմ<br>Առաջադրված արկղով |
| **Вес**<br>Քաշը | **22.3 кг**<br>22.3 կգ |

<table>
<tr><td></td><td></td><td>Дополнительно<br><br>Լրացուցիչ յուրաքանչյուր տպիչի հետ մեկական քարթրիջ<br><br>
<table>
<tr><td rowspan="5">Оригинальный картридж HP CE255X (№55X) (экономичный)<br><br>Բնօրինակ քարթրիջ ԷՅՉՓԻ ՍԻԻ255ԻՔՍ (№55ԻՔՍ) (տնտեսող)</td><td>Производитель<br>Արտադրող</td><td>hp<br>Էյչփի</td></tr>
<tr><td>Модель<br>Մոդել</td><td>CE255X<br>(№55X)<br>(экономичный)<br>Սիի255իքս<br>(№55իքս)<br>տնտեսող</td></tr>
<tr><td>Назна-чение<br><br>Նախատեսված են</td><td>Лазерные принтеры<br>Լազերային տպիչների համար</td></tr>
<tr><td>Описание<br>Նկարագրու-թյունը</td><td>Оригинальный картридж HP<br>Բնօրինակ քարթրիջ ԷյչՓԻ</td></tr>
<tr><td>Тип оборудования<br><br>Սարքավորման տեսակը</td><td>Черный Картридж<br><br>Սև քարթրիջ</td></tr>
</table></td></tr>
<tr><td>31</td><td>Համակարգչային ծրագիր 3</td><td>Stellar Phoenix Windows Data Recovery V6.0-EN-Tech License<br>Ստելլար ֆոնիիքս ուինդոուս դատա ռիքավերի ՎԷ 6 ԵԷՆ Տեխ Լիյսենս</td></tr>
<tr><td>36</td><td>Համակարգչային ծրագիր 8</td><td>RapidSSL Wildcard<br>Ռեփիդէսէսէլ ուայլդքարդ</td></tr>
<tr><td></td><td colspan="2">Մատակարարումը պետք է իրականացվի Կառավարական 3 շենք 225 սենյակ հասցով</td></tr>
</table>

ԳՆՈՐԴ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505963

Ա. Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Նորմա Պլյուս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2474400087570000
ՀՎՀՀ՝ 00053663

Դ. Մարկոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«НОРМА-ПЛЮС»
«NORMA-PLUS»
00053663

Հավելված N 2

<<01>> << 09> 2016թ. կնքված

N ՀՀ ԷՆՄԾԳ ՇՀԱՊՁԲ 15/8 94-16 ծածկագրով գնման պայմանագրի

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Չափաբաժնի Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | Քանակը | գինը | Քանակը | գինը | Քանակը | գինը | Քա-նակը | գինը | Քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 17 | Մուկ լազերային | հատ | 2250 | | | | | | | 20 | 45000 | 20 | 45000 |
| 25 | Քարթրիջների հավաքածու | Հավաքածու | 440250 | | | | | | | 1 | 440250 | 1 | 440250 |
| 26 | Տպիչ | հատ | 555000 | | | | | | | 3 | 1665000 | 3 | 1665000 |
| 31 | Համակարգչային ծրագիր 3 | հատ | 201000 | | | | | | | 1 | 201000 | 1 | 201000 |
| 36 | Համակարգչային ծրագիր 8 | հատ | 123000 | | | | | | | 1 | 123000 | 1 | 123000 |
| | Ընդամենը | X | | X | | X | | X | | 26 | 2474250 | 26 | 2474250 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505883

______________ Ա. Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նորմա Պլյուս>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
<<Արդշինբանկ>>ՓԲԸ
Հ/Հ՝ 2474400007570000
ՀՎՀՀ՝ 00053663

______________ Դ. Մարկոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՆՈՐՄԱ-ՊԼՅՈՒՍ» «НОРМА-ПЛЮС» «NORMA-PLUS» 00053663

Հավելված N 3

<<01 >> <<09>> 2016թ. կնքված

N ՀՀ ԷՆՄՍԳ ՇՀԱՊՁԲ 15/8 96-16 ծածկագրով գնման պայմանագրի

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Չափաբաժնի Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տնտեսագիտական դասակարգում | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. արտաբյուջեից՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 17 | Մուկ լազերային | 5122 | | | | | | | | | | 45000 | 45000 | 45000 | 45000 |
| 25 | Քարթրիջների հավաքածու | 5122 | | | | | | | | | | 440250 | 440250 | 440250 | 440250 |
| 26 | Տպիչ | 5122 | | | | | | | | | | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 |
| 31 | Համակարգչային ծրագիր 3 | 5132 | | | | | | | | | | 201000 | 201000 | 201000 | 201000 |
| 36 | Համակարգչային ծրագիր 8 | 5132 | | | | | | | | | | 123000 | 123000 | 123000 | 123000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

______________ Ա. Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նորմա Պլյուս>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
<<Արդշինբանկ>>ՓԲԸ
Հ/Հ՝ 2474400007570000
ՀՎՀՀ՝ 00053663

______________ Դ. Մանուկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4

<<01 >> <<09>> 2016 թ. կնքված
N 22 ԷՆՄՄԳ ՇՀԱՊՁԲ 15/8 ծածկագրով գնման պայմանագրի
94-16

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1

<< 01 >> << 09 >> 2016թ. կնքված

N *ՀՀ ԷՆՄԱԳ ՇՀԱՊՁԲ 15/8 ծածկագրով գնման պայմանագրի* 94-16

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -------------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և

(Գնորդի անունը)

---------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------------

(Վաճառողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
|---|---|
| | հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
| _______________________ | _______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| _______________________ | _______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |